

համար, որպիսի նպատակաւ և բոլոր թեմերը բաժանուեցին դատաստանական ութը շրջաններէ: Չընդունուեց Աստուածաշնչի վերաբննուած թարգմանութեան գործածութիւնը ժամերգութեանց ժամանակ:

Եկեղեցու կացութիւնը քննող մասնաժողովի հաշուեցոյցի մէջ բերուած էին հետեւեալ վիճակագրական տեղեկութիւններ. — Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցին բաղկացած է 62 թեմից և 23 միախօնարական շրջաններից: Հոգևորականների թիւն է 5149, որոնցից 94-ը եպիսկոպոս, 4,711 քահանայ և 318 դպիր: Ծխերի թիւն է 3,967. մասնակցողներն են 804,000 հոգի. վերջին 3 տարուայ ընթացքում մկրտուել են 182,618, և առաջին անգամ հաղորդուել 143,471. օծուած են 314 եկեղեցիներ: Կրօնական և բարեգործական նպատակաւ եղած նուիրարներութեանց գումարը 47 միլիօն դոլլարից աւելի է, որոնցից ծխական կարիքների վրայ ծախուել է 39 միլիօն դոլլար (78 միլիօն ռուբլի), իսկ թեմական կարիքները վրայ՝ 3,800,000 դոլլար: Հետեւեալ համաժողովը կայանալու է Վերգինիա նահանգի Ռիդմոնդ քաղաքում 1907 թուին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Որքան մեծ ոյժ և նշանակութիւն էր արուած զանազան քաղաքական նպատակներով կաթողիկոսներին՝ Պերմանիայում, այնքան աւելի և աւելի դարկ տուաւ այնտեղ այդ հանգամանքը աւետարանական զիտակցութեան, որն արտայայտուած է աւետարանական եկեղեցիներն արտաքուստ միացնելու ձգտմամբ: Այդ ձգտման առաջին արդիւնքն էր «Պերմանական Աւետարանական եկեղեցւոյ կոմիտէի» կազմակերպութիւնը, որը հանդիսանում է եկեղեցական իշխանութիւնների միութիւն, ընդհանուր բողոքական եկեղեցւոյ շահերը պաշտպանելու: Բայց եկեղեցական իշխանութիւններն այդ դաշնակցութեամբ չբաւականացան, և կարիք էր զգացուած աւետարանական եկեղեցիներն աւելի հաստատուն կերպով միացնելու, որն ընդգրկէր ոչ միայն եկեղեցական իշխանութիւններն, այլ և աւետարանական ժողովուրդը, և այդ ի հարկէ նրա ներկայացուցիչները — Սինօդի միջոցաւ:

Անցեալ հոկտեմբեր ամսին Պերմանիայում միաժամանակ կայացաւ երկու համաժողով, յատկապէս յիշեալ մաքով եկեղեցական սինօդ կազմակերպելու:

Հոկտեմբերի 31 ին Վորմս քաղաքում հաւաքուեցին զանազան եկեղեցական սինօդների 450 ից աւելի հոգևորական և աշխարհական անդամներ, ինչպէս և այդ մօրէին համակրող մասնաւոր անձինք, և «Գերմանական Աւետարանական կոմիտէի» հետ միատին հաղմակերպեց մի մարմին, որը պէտք է ծառայի որպէս եկեղրոնական ատենան աւետարանական գիտակցութեան և մի և նոյն ժամանակ հանդիսանայ գերմանական աւետարանական եկեղեցւոյ ժողովրդի ճշմարիտ ներկայացուցիչ մարմին. Կորդէս, Վալ քարողիչների և ուսուցչապետ Կերխէնհէյցմի գեկուլցումները մէջ մանրամասն նկարագրուած էին այդ շարժման նպատակն ու պատճառները: Նեշտուեց, որ աւետարանական եկեղեցին Գերմանիայում կորցնում է իւր դիրքը թէ քաղաքական կեանքում, որտեղ գերակշռութիւն է ստանում կաթոլիկութիւնը, և թէ հասարակական և հոգևոր կեանքում, որտեղ զօրանում է ռամկավարական կուսակցութիւնն ու անհաւատութիւնը: Դրա պատճառը հէնց աւետարանական եկեղեցւում մէջն է, որը անուշադիր է թողնում իւր հատարական կոչումը (միսսիան):

Պէտք է քարոզել տանիքներից, ասում էր Կորդէսը, որ Աւետարանի կենսական ուժերը արուած են ոչ թէ մասնաւոր անձանց համար հոգւելու, այլ ժողովրդական ոգին վերանորոգելու, որ իրենք պարտաւոր են օգնել ոչ միայն յաւիտենական կեանքի հասնելու, այլև պահպանելու երկրային առողջ կուլտուրական կեանքը, որ այն եկեղեցին է կորցնում գոյութեան իրաւունքը, որը գոյութիւն ունի որպէս դիւանայեցութիւն (քիւրօկրատիա) կամ մասնաւոր շրջան, իսկ կեանքի ընթացքը թողնում է առանց յաւիտենական Աւետարանի ազդեցութեան՝ վախենալով մարդկանցից և գործունէութիւնից:

Առանց քաղաքական, ընկերվարական և գեղարուեստական կեանքի գիտական տեխնիքական մասերի քննութեան մէջ մըտնելու, եկեղեցին պարտաւոր է իւր քաղաքական գործունէութեամբ պատուաւորելու կեանքի մէջ աւետարանական աշխարհայեցողութեան վրեժ կրօնական սկզբունքները:

Իսկ այդ նպատակին հասնելու համար, հարկաւոր է այնպիսի հաղմակերպութիւն, որը սկսուելով համայնքներից, վերջանար առանձին եկեղեցիների միութեամբ «Գերմանական Աւետարանական Անօդական խորհրդով», որին պէտք է մասնակցեն սինօդների ներկայացուցիչներ: Քանի որ այդ սինօդական միութիւնը չի կազմուել՝ այդ մօրէին համակիր մարդիկ պէտք է կազմեն աղատ խմբակցութիւններ նախապատրաստելու համար եկեղեցիների միութիւն սինօդական սկզբունքների հիման վրայ:

Համաժողովն այդ նպատակով Վորմսում հիմնեց «Սղատ միութիւն դերմանական աւետարանական սինոդականները» (Verband): Ժողովականներն իրենց հայեացքները եկեղեցական այլ խնդիրներին մասին ձեռնկերպեցին առանձին ղեկուցմամբ:

Ա. ՀԱՌՆԱԿ

ՔՐԻՍՏՈՆԵՌԻԹԻԿՆՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻԿՆԸ *)

Ձկայ իրիւթիւնն ոչ մի այլ անձի մէջ, չի՛ արուած նաև ոչ մի այլ անուն, որով մենք երջանիկ լինել հարողանայինք, բայց եթէ Յիսուս Քրիստոսի անունը **) — այն է քրիստոնէական եկեղեցու դաւանանքը:

Այս դաւանանքով է սկսել նա իւր դոյութիւնը, յանուն այս դաւանանքի են մեռել իւր նահատակները, և դեռ այսօր էլ, ինչպէս և տասն և ութ դար առաջ, այս դաւանանքից է ըզխում իւր ոյժը: Կրօնի ողջ բովանդակութիւնը, կեանք Աստուծոյ մէջ, թողութիւն մեղաց, միսիթարութիւն մշակ միջոցին, նա հասցում է այս անձի հետ: Աորանով նա միացնում է այն, ինչ որ կեանքին բովանդակութիւն ու յարատեւութիւն է տալիս, այո՛, հէնց ինքը՝ յաւիտենականը մի բանի հետ, որ պատմական է, և այն դու՛մ, թէ՛ այս երկուսին շաղկապող միութիւնն անբաժանելի է:

Հաստատուն է արդեօք մի այսպիսի յարակցութիւն, հարո՞ղ է նա դիմանալ որո՞ճացող մտքի փորձին: Այն ամենն, ինչ որ պատմական է, թուում է թէ՛ մի անընդհատ դառնալ-գոյանալ ու անցնել-չքանալ է: Մի՞թէ կարելի է ուրեմն մի երևոյթ պատմութեան շարքից դուրս քաշել և նորան ընծայել յաւիտենականութեան ամբողջ կշիռը, այն էլ անցեալին պատկանող մի երևոյթի: Եթէ այն անձը գոնէ դեռ ևս մեր մէջ լինէր, թերևս հարելի էր այլ բան ասել: Բայց շատ ու շատ դարեր և մի խճճուած աւանդութիւն պարսպի սէն հանգնած

*) Das Christentum und die Geschichte, D. Adolf Harnack, Reden und Aufsätze 1904 II Band, SS. 3—21.

**) Հմմտ. Դորժ Առաքելոց Դ 12.